VAHAKN N. DADRIAN, The Role of Turkish Phisicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, 1986, vol. I, № 2, pp. 169—192:

ՎԱՀԱԳՆ ԴԱԴՐՅԱՆ, Թուրք բժիշկների դերը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայերի ցեղասպանության մեջ:

Վ. Դադրյանը մասնագիտությամբ սոցիոլոգ լինելով հանդերձ, ուսումնասիրում է ցեղասպանության պատմությունը և նորանոր տվյալներ ու փաստաթղթեր որոնում Եղեռնի մասին։

Վ. Դադրյանի հոդվածը շարադրված է եվրոպական փաստաթղթերի՝ մասնավորապես 1918—1921 թթ. բրիտանական հետախուզության տեղեկագրությունների, գերմանացի ականատեսների վկայությունների, ինչպես նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանում պահվող նյութերի հիման վրա։ Դրանք հնդինակին հնարավորություն են տվել ապացուցելու, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրք բարբարոսների ձեռքով կազմակերպված հայկական կոտորածների գործադրման մեջ զգալի գեր է խաղացել նաև թուրքական բժշկական անձնակազմը, որն անմիջականորեն մասնակցել է հայ ժողովրդի նկատմամբ գործադրված վայրագություններին։ Հեղինակը ներկայացրել է թուրք ոճրագործ բժիշկների ցանկը և կանգ է առել մասնավորապես երկու հայտնի բժիշկ քաղաքագետների՝ ԻԲԲԻհատի կենտկոմի անդամներ Նազիմի ու Բեհաեդդին Շաքիրի վրա։ Նրանք մեծ գեր են խաղացել հայերի բնաջնջման գլխավոր գործիք հանդիսացող Հատուկ կազմակերպության ջոկատների ստեղծման և ղեկավարման գործում։ Այդ կազմակերպության մեջ համարյա ամբողջովին ներդրավված են եղել մարդասպաններ ու պրոֆեսիոնալ ոճրագործներ, որոնք արդարադատության և ներքին գործերի մինիստրությունների հատուկ թույլտվությամբ բանտերից ազատ են արձակվել ու ընդգրկվել հիսունից մինչև երկու հարյուր հոգուց բաղկացած չարդարար ջոկատների (չեթեներ) մեջ։ Այդ ջոկատները ղեկավարել է Օսմանյան զինվորական ակադեմիայի շրջանավարտ սպաների հատուկ խումբը։

1919 թ. ապրիլին թուրքական զինվորական ատյանի դատական նիստում ընթերցված ամբաստանագիրը դոկտոր Նազիմին ներկայացնում է որպես Հատուկ կազմակերպության ջոկատների գլխավոր կազմակերպիչ։ Դատարանը հաստատում էր, որ այդ ջոկատները հիմնականում ստեղծված են եղել «տեղահանվածների քարավանները չարդելու և բնաջնջելու համար»։ Դոկտոր Նազիմին առնչվող ամբաստանագիրը նրան ներկայացնում է որպես Եղեռնի իրականացման վերջնական որոշում կայացնողներից մեկի։ Վկայակոչվում է նրա արտահայտությունն այն մասին, թե հակահայկական միջոցառումների պլանն «ընդունվել էր Կենտրոնական կոմիտեի հետ երկարատև ու ամբողջական խորհրդակցությունից հետո» և որ այդ միջոցառումների նպատակն էր «Արևելյան հարցի» լուծումը։

Դատական նիստերի ընթացքում ԻԲԲԻհադի մի շարք բարձրաստիճան ղեկավարների խոստովանությունները վերաբերել են չարդարարներին հավաքագրելու գործում դոկտոր Նազիմի խաղացած անժխտելի դերին։

Հոդվածում հետաքրքիր փաստեր են բերվում դոկտոր Բեհայեդին Շաքիրի ոճրագործությունների մասին։ Լինելով Հատուկ կազմակերպության ջոկատների պարագլուխներից մեկը, նա զբաղեցրել է արևելյան նահանգներում գործող ջոկատների գլխավոր հրամանատարի պաշտոնը։ Դատարանում նրա դեմ ամենածանրակշիռ մեղադրանքը ներկայացրել է 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան, որը հետևյալ կերպ է եզրափակել իր վկայությունը. «Հայերի կոտորածն ու բնաջնջումը և նրանց ունեցվածքների կողոպտումը արդյունք էին «ԻԲԲԻհադ վե Թերաքիի» որոշման։ Բեհաեդդին Շաքիրն այն մարդկանցից մեկն էր, որը 3-րդ բանակի գոտում հավաքագրեց մարգ մարթող դահիճների, ղեկավարեց ու օգտագործեց նրանց։ Կառավարության ղեկավարները ենթարկվում էին Բեհաեդդին Շաքիրի հրամաններին ու ցուցումներին։ 3-րդ բանակի գործողության գոտում տեղի ունեցած բոլոր ողբերգությունները, բոլոր սադրանքներն ու անբարոյական արարքները, այդ թվում կախաղանից մազապուրծների, արյունոտ ձեռքերով ու արնակալած աչքերով ժանդարմների հավաքագրումը նրա մեքենայությունների արդյունքն էին»։

Վ. Դադրյանը իր հոդվածում նաև ցույց է տալիս, որ հայ ազգաբնակչության կոտորածները կազմակերպելու մեջ բացի վերոհիշյալ երկու բժիշկներից, անմասն չեն մնացել իթթիհադի հովանավորությունը վայելող բազմաթիվ այլ թուրք բժիշկներ ևս։ Նա իր հոդվածում առանձնացնում է հատկապես այնպիսի ոճրագործի, ինչպիսին էր դոկտոր Մեհմեդ Բեշիրը, որը 1915 թ. զբաղեցրել է Դիարբեքիրի կառավարչի պաշտոնը. Վերջինս անձամբ կազմակերպել է հարյուր քսան հազար հայերի տեղահանումը Դիարբեքիրից։ Թուրքական աղբյուրներում առկա է հայերի կոտորածները կազմակերպելու մասին նրա կողմից արված հետևյալ պատմառարանություն-խոստովանությունը. «Չնայած, որ մասնագիտությամբ բժիշկ եմ,—ասել է նա,—սակայն չեմ կարող ուրանալ իմ ազգությունը։ Ես աշխարհ եմ եկել որպես թուրք։ Իմ ազգային ինքնությունն ամեն ինչից վեր է... Հայ դավաճաններն ապաստան էին գտել հայրենիքի ծոցում։ Նրանք վտանգավոր մանրէներ էին։ Միթե՞ բժշկի պարտականությունը չէ այս մանրէներին ոչնչացնելը։ Կամ հայերը պիտի վերացնեին թուրքին և տիրանային այս երկրին կամ էլ նրանք պիտի ոչնչացվեին թուրքի կողմից։ Ես չէի կարող վարանել իմ ընտրության մեջ և կատարեցի ընտրությունս։ Թուրք լինելս գերադասեցի իմ բժշկական կոչումից։ Իհարկե, խիղճս տանջում է ինձ, բայց և ես չէի կարող տեսնել իմ երկրի կործանումը։ Փակեցի իմ աչքերը և առանց վերապահության անցա գործի։ Իսկ ինչ վերաբերում է պատմության առջև պատասխանատվություն ունենալուն, ապա հոգս չէ, թե այլազգի պատմաբաններն ինչ կգրեն իմ մասին»։

Կոտորածներից հետո որոշ թուրք բժիշկներ խղճի թելադրանքով փորձել են մերկացնել իրենց գործընկերների անմարդկային գործողությունները։ Այսպես, 1918 թ. թուրք հայտնի վիրաբույժներից մեկը՝ Հայդար Ջեմալը, բաց նամակ է հղել Թուրքիայի ներքին գործերի մինիստրին, որտեղ մերկացրել է կոտորածների ժամանակ բժիշկների կատարած ոճրագործությունները և դատապարտել նրանց անմարդկային «գիտափորձերը»։ Նամակում նշվում է, որ «1916 թ. սկզբին 2-րդ բանակի առողջապահության գլխավոր պաշտոնատարի հրահանգով, երբ բծավոր տիֆի համաճարակը լուրջ սպառնալիք էր դարձել, Երզնկայում տեղահանման ենթարկվող անմեղ հայերին ներարկել են բծավոր տիֆից տառապող հիվանդների արյուն՝ առանց վարակազերծելու։ Այս փորձը, որը թույլատրելի էր միմիայն կենդանիների վրա կատարելու, պատճառ դարձավ մեծ թվով անմեղ հայերի մահվան, որոնք հավատացած էին, թե ներարկումը բուժման նպատակների համար է։ Նամակագիրն իր բողոքն ուղղելով ներքին գործերի մինիստրին, պահանջում էր պատասխանատվության ենթարկել հանցագործ բժիշկներին։

Վ. Դադրյանի հոդվածն ավարտվում է մի շարք ուշագրավ եզրակացություններով։ Նա այն համոզման է, որ հայկական ցեղասպանության և երկրորդ աշխարհամարտի ժամանակ հրեաների բնաջնջման միջև առկա է զարմանալի նմանություն։ Հարցը դիտելով թուրք և գերմանացի բժիշկների գործողությունների համադրման և նրանց մեթոդների նույնության տեսանկյունից, Վ. Դադրյանը եզրակացնում է, որ հայերի ջարդերը նախօրինակ և փորձադաշտ են եղել հետագայում գերմանական ֆաշիզմի կողմից հրեաների բնաջնջումը կազմակերպելու համար։ Փաստական առկա նյութը բերում է այն համոզման, որ ֆաշիստ բժիշկները, ի դեմս թուրք բժիշկների, Օսմանյան կայսրությունում ունեցել են իրենց ուսուցիչներին։

Վ. Դադրյանը դրա հետ մեկտեղ նկատում է, որ եղան նաև թուրք բժիշկներ, որոնք կյանքը վտանգելով պաշտպանեցին ու ապաստան տվեցին իրենց գործընկեր հայ բժիշկներին։

ՆՈՒԲԱՐ ՉԱԼԸՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու